

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝
Նելլի Հարությունյան

Կ Ա Ր Գ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացվող մրցույթին դիտորդական գործունեություն իրականացնելու նպատակով դիտորդների հավատարմագրման ընթացակարգը, ինչպես նաև դիտորդի կարգավիճակից զրկելու հիմքերը և պայմանները:

2. Դիտորդական առաքելության նպատակը հանրային պաշտպանի թեկնածուների համար մրցույթի (**այսուհետ՝ Մրցույթ**) անցկացման գործընթացի վերաբերյալ հավաստի տեղեկությունների հավաքագրումն է:

3. Դիտորդական առաքելությունն իրականացվում է դիտորդների միջոցով՝ պահպանելով չեզոքության, անկողմնակալության և Պալատի հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացվող մրցույթի կազմակերպման և մրցույթի արդյունքների գնահատման մրցութային հանձնաժողովի (**այսուհետ՝ Հանձնաժողով**) կողմից իրավական ակտերի ընդունման և Մրցույթի անցկացման գործընթացներին չմիջամտելու սկզբունքները:

4. Դիտորդի գործունեության նյութական և ֆինանսական ապահովվածությունը կատարվում է դիտորդին ուղարկող կողմի կամ դիտորդի անձնական միջոցների հաշվին:

II. ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ

5. Մրցույթի ժամանակ դիտորդներ առաջադրելու իրավունք ունեն՝

- միջազգային կազմակերպությունները.
- Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական կամ հյուպատոսական կազմակերպությունների ներկայացուցիչները.

– Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հասարակական կամ այլ ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են մարդու իրավունքների պաշտպանության հարցեր.

5.1. Սույն կարգի 5-րդ կետում նշված կազմակերպություններին դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր ուղարկելու իրավունք ունի նաև Հանձնաժողովի նախագահը: Հրավերն ուղարկվում է մրցույթի հայտարարությունից հետո հինգ օրվա ընթացքում: Հրավերում նշվում է

անցկացվող Մրցույթի անցկացման վայրը և ժամը, ինչպես նաև համապատասխան դիտորդական կազմակերպության կողմից դիտորդներ նշանակելու համար թեկնածուների առավելագույն թվաքանակի վերաբերյալ տեղեկատվություն: Հրավեր ստացած կազմակերպությունները հանձնաժողովին ներկայացնում են դիմում հրավերը ստանալուց հետո երկու օրվա ընթացքում: Դիմումը պետք է բավարարի սույն կարգի 6-րդ կետում նշված պահանջներին:

(կեփը լրացվել է Հանձնաժողովի 28.11.2018թ. թիվ 1/2-Լ որոշմամբ)

6. Սույն կարգի 5-րդ կետին համապատասխանող կազմակերպությունները Հանձնաժողովին են ներկայացնում դիմում, որը պետք է պարունակի դիմողի անվանումը, ծանուցման հասցեն, հեռախոսահամարը, նշում՝ սույն կարգի պայմաններն ընդունելու վերաբերյալ, դիմումի տրման ամսաթիվը, դիմողի ստորագրությունը, մեկ դիտորդի թեկնածուի անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը, ինչպես նաև դիտորդի կողմից ստորագրված հայտարարություն այն մասին, որ համաձայնվել է սույն կարգի պայմաններին: Դիմումին կցվում է նաև կանոնադրության պատճենը:

7. Սույն կարգի 5-րդ կետին համապատասխանող կազմակերպությունները դիմումը Հանձնաժողովին ներկայացնում են Մրցույթի հայտարարությունից հետո 5 օրվա ընթացքում:

8. Դիտորդ է համարվում սույն կարգի 5-րդ կետում նշված կազմակերպության ղեկավարի կողմից առաջադրված չափահաս ֆիզիկական անձը, որը հավատարմագրվել է Հանձնաժողովի կողմից և ստացել է դիտորդի վկայական **(այսուհետ՝ Վկայական)**:

9. Հանձնաժողովը վարում է հավատարմագրված դիտորդների ցանկ:

10. Հանձնաժողովը դիտորդներին տրվող վկայականներն այդ կազմակերպություններին է հանձնում դիմումը ստանալուց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում:

11. Հանձնաժողովը մերժում է դիտորդների հավատարմագրման մասին դիմումը, եթե՝

- սույն կարգով նախատեսված կազմակերպության կանոնադրական խնդիրները կամ նրանց գործունեությունը չեն բավարարում սույն կարգի պահանջներին կամ

- դիմող անձը չի համաձայնվել ենթարկվել սույն կարգի, Պալատի խորհրդի 15.01.2014թ. թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անկացման» կարգի **(այսուհետ՝ Մրցույթի կարգ)**, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի դրույթներին կամ

- պահպանված չեն դիմումի՝ սույն կարգով սահմանված պահանջները, կամ

- դիտորդ առաջարկած կազմակերպության հասարակական գործունեության վերաբերյալ զանգվածային լրատվական միջոցներում առկա է բացասական տեղեկատվություն:

12. Հանձնաժողովը յուրաքանչյուր դիտորդի տալիս է դիտորդի վկայական, որի ձևը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

13. Վկայականը լրացվում է հայերեն լեզվով:

14. Վկայականը վավեր է դիտորդի կողմից անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:

15. Վկայականը վավեր է մինչև հարցազրույցի անցկացման օրը ներառյալ:

16. Հանձնաժողովն իրավունք ունի համապատասխան դիտորդին գրկել դիտորդի կարգավիճակից՝

- Դիտորդի կողմից որևէ հավակնորդի աջակցելու կամ հավակնորդի հետ առանց Հանձնաժողովի նախագահի կամ անդամի թույլտվության հաղորդակցվելու դեպքում,
- մրցույթի իրականացմանը խոչընդոտելու դեպքում,
- սույն կարգի, Մրցույթի կարգի, Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերի պահանջները խախտելու դեպքում:

III. ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Դիտորդը Մրցույթի օրը հետևում է Հանձնաժողովի աշխատանքներին և կարող է Հանձնաժողովի նախագահին ներկայացնել իր դիտարկումներն ու առաջարկությունները:

18. Դիտորդական առաքելություն իրականացնելիս Դիտորդն իրավունք ունի՝
- ներկա լինելու քննական սրահում.
 - հետևելու Մրցույթի գործընթացներին.
 - ազատ տեղաշարժվելու քննական սրահում՝ Մրցույթի դիտարկման համար.

19. Դիտորդը իրավունք չունի միջամտելու Հանձնաժողովի աշխատանքներին:

20. Դիտորդը պարտավոր է պահպանել սույն կարգի, Մրցույթի կարգի և Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերի պահանջները: